Այս ձողը կոչւում է սանդերքի բերան կամ դավշահ, որ քրդերէն դարձեալ նշանակում է սանդերքի բերան (դաւ = բերան, շահ = սանդերք)։ Սանդերքի գործածութիւնը կատարւում է այսպէս. նըստում են ծալապատիկ, մի քար դնում ձախ ոտի մօտ, սանդերքի մատների մասը անկում այս քարի վրայ, ծունկը դնում սանդերքի պոչի վրայ, որով եւ անշարժ պահում են նրան։ Ապա վերցնում են քէօրանը, երկու ձեռքով բռնում ծայրերից, անցկացնում սանդերքի մատների վրայ եւ երկու կողմից էլ քաշում. ամեն մի ձեռքում մնում է մի կտոր բուրդ, որ կոչւում է բուռ։ Այս բռերը միմեանց վրայ են դնում, ծայրերից բռնում, կրկին մատների վրայ անցկացնում եւ կըրկին քաշում։ Այսպէս կրկնելով 3–4 անգամ, դնում են մի կողմ ապա երեքական բուռ վերցնելով թեթեւակի ոլորում են միմեանց վրայ, այնպէս որ ստացւում է գլանաձեւ 5–10 սանտիմետր տրամագծով եւ կէս մետր երկարութեան կանձ»։

«Այս կանձերը կրկին անգամ մի եւնոյն ձեւով գգում են եւ աւելի փոքր կանձեր շինում։ Այս երկրորդ անգամ գզելը կոչւում է ըստկել (մաքրել)»[17]։

Հաւանաբար բուրդ մաքրելու, քրքրելու եւ գզելու Շատախի այս կերպը գուցէ իր մանրամասնութեանց մէջ քիչ մը տարբերի Հայաստանի միւս մասերէն, գուցէ գործիքները տարբերին, գուցէ եւ անունները, սակայն գլխաւոր մասերուն մէջ ան համանման պիտի մընայ։

Այժմ անցնինք ներկարարութեան։

ՆԵՐԿԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Կ'արժէ որ պատմական զոնէ համառօտ ակնարկով մը անդրադառնանք ներկարարութեան պատմութեան՝ մեր նախնեաց մօտ։

Դժբախտաբար քիչ է եղած նիւթը։ Մեր մատենագրութեան հին բաժինը շատ բան չի տար։ Օտար հին մատենագրութիւնը, գլխաւորաբար արաբականը, բաւական մանրամասնութիւններ կու տայ։ Մեր ձեռագիրներուն մէջ երբեմն կարելի է հանդիպիլ ներկարարութեան վերաբերող պատառիկներու։ Ցիշատակարանները կրնան մեծապէս օգտակար ըլլալ մեղի տալով ներկարարներու անուններ, սակայն ատոնք մեծ մասամբ անմատչելի կը մնան։ Ուրեմն տրուած պայմաններուն տակ շատ հարեւանցի ուրուագիծ մը միայն կրնամ տալ։

Ուրարտացիներու ժամանակ իսկ (ըստ Սարգոնի 714 նախ քան Քրիստոս արձանագրութեան) Արարատի կամ Ուրարտուի եւ Կուրխիի կարմիր ներկուած հիւսուածեղէնները մեծ համբաւ ունէին այն ատենուան քաղաքակիրթ աշխարհին մէջ։ Հայկական կարմիրը կ'ե-

(17) Տնայնագործութիւնը Վասպուրականում։ Շատախի շալագործութիւնը։ Ազգ. Հանդ., 1913, թիւ 2, էջ 191–193։